ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍ ԵՎ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԷՐԱՅՏԱՐԵԱՆԻՆ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

ԹԲԻԼԻՍԻ

Բազում տարիներէ ի վեր իր ·ուզեկ եւնք եղած Ձեր եկեղեցական ապաստաւորութեան թէ՛ Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի մայրավանքին մէջ և թէ՛ Վրրաստանի թեմի հայ ժողովուրդի հոգևոր առաջնորդութեան ծառայութեան մէջ:

Ձեր ողջ հոգևորական կեանքի և գործի ընթացքին Հուք յայտնաբերեցիք ամբողջական և անվերապահ սէր և հաւատարմութիւն հանդէպ Մայր Աթոռիս և մեր հաւատացեալ հայ ժողովրդեան:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և անշահախնդիր ու օգտաշատ ծառայութեանց և որպէս բարոյական վարձատրութիւն զոհաբերական ոգիով Ձեր տարած աշխատանքներուն, այսու Հայրապետական կոնդակս Ձեզի կը շնորհենք

ԱՐՔՈՒԹԵԱՆ տիտղոս և պատիւ

Վստահ եմք, որ այս պարգևատրումը Ձեզի համար պիտի դառնայ նոր խթան և մղում՝ առաւել նուիրուածութեամբ շարունակելու և առաւել պտղաբերութեամբ իմաստաւորելու և արժէքաւորելու Ձեր հոգևորական սաւասը մեր Սուրբ Եկեղեցւոյ, պաշտելի հայ հաւատացեալ ժողովուրդին և մեր նուիրականագոյն Սրբութեան Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս բարեբաստիկ առիթով, անգամ մը ևս կը յայտնենք Մեր հայրական սէրն ու Հայրապետական գնահատանքը հանդէպ Վրաստանի թեմի Մեր սիրեցեալ և հաւատացեալ, հաւատաւոր և հաւատարիմ հայ ժողովուրդին, մաղթելով որ օրէ օր առաւել ևս ծաղկի ու բարգաւաճի հայ ազգային-եկեղեցական կեանքը Վրաստանի օրհնեալ հողին վրա:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջութիւն, հոգեւոր կորով և յարատևութեան անապատ ոգի:

Ողջ լեր ուք, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէջ-Ամէն:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4 Սեպտեմբերի
Յամի Տեառն 1995
և ի թուին Հայոց ՌՆԽԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/7